

ՈՐՈՇՈՒՄ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական
խորհրդի 2011թ. ապրիլի 29-ի նիստի
/արձանագրություն N14/

Լսելով և քննարկելով “Մագիստրոսական կրթության կազմակերպման ընթացքը և զարգացման միտումները” հարցը /զեկուցող՝ Տ.Մ.Այվազյան/ համալսարանի գիտական խորհուրդը **որոշում է.**

1. ՀՊՄՀ մագիստրոսական կրթության կազմակերպման ընթացքի և զարգացման միտումների մասին զեկուցումն ընդունել ի գիտություն:

2. Մագիստրատուրայի՝

Առկա ուսուցում /մագիստրատուրա/

- Կիրառական արվեստ /I և II կուրս/
- Սոցիալական աշխատանք /I և II կուրս/
- Մանկավարժություն և մեթոդիկա /Ն/դ/ /I և II կուրս/
- Իսպաներեն լեզու և գրականություն /I և II կուրս/
- Կրթության կառավարում /I և II կուրս/
- ՍՄԳ /Կառավարում մենեջմենթ/ / II կուրս/

Հեռակա ուսուցում /մագիստրատուրա/

- Իրավագիտություն /մանկավարժություն/
- Հայոց լեզու և գրականություն
- Մանկավարժություն և մեթոդիկա /Տարրական կրթությամբ/,

մասնագիտությունների համար մշակված ուսումնական պլանները կիրառել 2011-2012 ուս.տարվանից:

3. 2011-2012 ուս.տարում մագիստրոսական կրթական ծրագրով ուսուցումն իրականացնել 48 մասնագիտությունների գծով, որոնց համար լիցենզիայով սահմանված է 1353 տեղ:

4. Մշակել և ներկայացնել հաստատման մագիստրատուրայի հեռակա ուսուցման ընդունելության կարգը:

5. Բոլոր մասնագիտությունների գծով մագիստրոսական կրթական ծրագրով ավարտական ատեստավորումը իրականացնել միայն մագիստրոսական ատենախոսության պաշտպանությամբ:

6. Մագիստրոսական կրթական ծրագրերի շրջանակում տեղեկատվության ապահովման նպատակով գրադարանին կից ստեղծել էլեկտրոնային ընթերցասրահ: Հանձնարարել ամբիոններին երաշխավորվող առարկաների ծրագրերի, դասընթացների, դասագրքերի էլեկտրոնային տարբերակները տրամադրել ընթերցասրահին:

7. Մագիստրոսների գիտամանկավարժական պրակտիկաները անցկացնել մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպություններում:

8. Մագիստրոսների ուսումնառության ընթացքում առանձնակի ուշադրություն հատկացնել «Տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաները մասնագիտական ոլորտում» և «Օտար լեզուների մասնագիտական հաղորդակցման ոլորտում» առարկաներին: Դրանց ծրագրային բովանդակությունը նպատակաուղղել մասնագիտությունների որակի ապահովմանը շրջանավարտներին ներկայացվող կոմպետենցիաների և ելքային վերջնարդյունքների պահանջներին:

Ռեկտոր՝

Ռուբեն Միրզախանյան